

ՀԱՅ ՍՐԲԱԽՈՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՄՈՒՏ ՀԵՏԱԶՈՏՈՂԸ
(Քնարիկ Տեր-Դավթյանի ծննդյան 90-ամյակի առթիվ)

Լրացավ բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի առաջատար գիտաշխատող Քնարիկ Տեր-Դավթյանի ծննդյան 90-ամյակը:



Ք. Տեր-Դավթյանը ծնվել է 1926 թ. Իրանի Թավրիզ քաղաքում: 1934 թ. ընտանիքով հայրենադարձվել են Հայաստան: 1935–1945 թթ. սովորել է Երևանի Պուշկինի անվան միջնակարգ դպրոցում, իսկ 1945–1950 թթ.՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետում: 1951–1953 թթ. սովորել է նույն ֆակուլտետի ասպիրանտուրայում: 1951–1971 թթ. գործակցել է Մաշտոցի անվան Մատենադարանի հետ, ռուսերեն թարգմանել հայ միջնադարյան գրականության հուշարձանները: 1972 թ. աշխատում է Գրականության ինստիտուտում:

1975 թ. թեկնածուականատենախոսություն է պաշտպանել «Հայ վարքագրությունը 11–15-րդ դարերում» թեմայով: 1995 թ. դոկտորական է պաշտպանել՝ «Քրիստոնեական գրականության զարգացման ուղիները Հայաստանում» թեմայով:

Գիտական գործունեությունը սկսել է թարգմանական աշխատանքներով՝ Շիրակացու «Տիեզերագիտություն» (տպ. 1962 թ.) և մի շարք վարքագրական գործեր ամփոփող «Հայ սրբախոսական գրականության հուշարձաններ» (տպ. 1973 թ.) գրքերով: Այնուհետև հետևողականորեն զբաղվել է հայ միջնադարյան գրականության բնագրերի և հատկապես վարքագրական ու կրոնաբարոյախրատական թեմաներով գործերի ուսումնասիրությամբ, քննական բնագրերի կազմությամբ, ծանոթագրմամբ և ռուսերեն թարգմանությամբ:

Վարքերի և վկայաբանությունների ժանրային կառուցվածքը, վարքագրական կողմից հասկացությունը, որի հիման վրա էին ներկայացվում սրբերի ու նահատակների գրական դիմանկարները, վարքագրական ժանրի ձևավորումը բյուզանդական գրականության մեջ, ապա և անցումը հայ գրականությանը սկսած Ոսկեդարյան շրջանից ու հետո ժանրի պատմական զարգացումը հայկական միջնադարում թարգմանական և ինքնուրույն գրական հուշարձանների քննությամբ՝ կատարել է Ք. Տեր-Դավթյանը: «Հայ վարքագրությունը XI–XV դդ.» (1980 թ.) գրքում նա մանրամասն անդրադառնում է այս հարցերին, հայ սրբախոսական գրականության պատմությու-

նր ներկայացնելով ըստ վարքերի և վկայաբանությունների գրության ժամանակի, որով հայ վարքագրությունը դիտարկվում է հայ գրականության և հայ ժողովրդի պատմության համատեքստում ու վարքագրական գրականության ընթացքի պարբերացումը կատարվում է ըստ այդմ: Այն կարևոր դրույթն է առաջ քաշվում, որ սկսած V դարից և հատկապես Ավարայրից հետո հայ վարքագրության հերոսները դառնում են ոչ միայն պարզապես սրբակենցաղ և ճգնակյաց անձնավորությունները, այլև նրանք, ովքեր այդ հատկանիշներն ունենալուց բացի իրենց կարևոր ավանդն են բերել հայ մշակույթին, դպրությանը և կամ էլ հանուն հավատի ու հայրենիքի նահատակներ են: Ըստ այդմ՝ հայկական առաջին վարքերը նվիրված են հայ հոգևոր-մշակութային կյանքի ժամանակի ամենանշանավոր գործիչներին: Աշխատության մեջ նրբին քննությամբ տարբերակվում է վարքագրական գործերի երկու խումբ: Առաջինը՝ որպես կենսագրական վարքեր, և երկրորդը՝ ներբողյաններ, որոնցում սրբերի կենսագրությունը ներկայացվելուց բացի դրվատվում են նաև նրանց հոգևոր-իմացական արժանիքները: Ժանրային փոխներթափանցումների շրջանակում ցույց է տրվում, թե սրբերի և նահատակների մասին պատմությունները ինչպես են արտահայտվել տեսիլներում, օրինակ, Ստեփաննոս Հուսկան Որդուն նվիրված, և հրաշապատում՝ բնորոշ օրինակը Նարեկացու հրաշապատում վարքը:

Տեսական այս դրույթներն ավելի մանրամասն շարադրմամբ և մինչև XVII դարը հասնող ժամանակային ավելի լայն ընդգրկմամբ ներկայացված են «Армянские жития и мученичества (V–XVII вв.)» (տպ. 1995 թ.) հրատարակության մեջ: Առաջաբանում ներկայացվում, վերլուծվում է այս ժանրի ծագումն ընդհանուր քրիստոնեական գրականության շրջանակում և դրա հետագա ընթացքը մեր գրականության մեջ: Շեշտվում է, որ հայ վարքագրությունը կրում է քրիստոնեության առաջին դարերի շունչը: Ինչպես նշում է Ք. Տեր-Դավթյանը, հայ սրբախոսական գրականությունն իրենում ներառում է վաղ շրջանի բյուզանդական և ասորական վարքագրությունը, որը գեղարվեստական ու թեմատիկ առումով մեծ ճանապարհ էր անցել քրիստոնեության առաջին նահատակներին նվիրված դատական ակտերից մինչև IV դարի մեծ կապադովկացիների գործերը: Հայկականը, սակայն, շուտով ազգային երանգավորում է ստանում և ձեռք բերում երկու կարևոր հատկանիշ: Առաջին՝ հայ վարքագրությունը ավելի պատմական բնույթ է կրում, երկրորդ՝ ուներ ընդգծված ազգային-ազատագրական ուղղվածություն: Ժանրի պատմական քննությամբ ցույց է տրվում, թե հեթանոսական շրջանի դատական ակտերը V դարից հետո ինչպես են վերածվում հավատացյալ քրիստոնյայի և այլակրոն իշխողի միջև կոնֆլիկտի, որն, ըստ էության, հավատուրացությունից բացի ենթադրում էր նաև հրաժարում ազգային պատկանելությունից: Ըստ այդմ՝ թարգմանական և ինքնուրույն վարքերը քրիստոնեության առաջին քարոզիչներ Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալներին նվիրված

վկայաբանություններից մինչև ուշ միջնադար՝ գաղափարական հարցադրումների նկատելի փոփոխություններ են կրում:

Գրքում ծանոթագրություններով և համառոտ վերաշարադրմամբ ռուսերեն թարգմանությամբ ներկայացված են 20 վարք և 200 վկայաբանություն: 2011 թ. լույս տեսավ այս աշխատանքի հայերեն լրացված և փոփոխված տարբերակը, որում ներկայացվում են 30 վարք և 200 վկայաբանություն:

Գրքի հետազոտական մասում շարունակված և զարգացված են նախորդ երկու գործերի տեսական դրույթները: Նշվում է, որ հայկական առաջին վարքագրական հուշարձաններն ի հայտ են եկել ազգային ինքնություն գրականության ձևավորման շրջանում, կարևոր դեր խաղալով հայ գեղարվեստական արձակի սկզբնավորման գործում: Որպես գեղարվեստական բնորոշ հատկանիշ ասվում է, որ միջնադարյան հեղինակները սրբերի ու նահատակների կերպարները ստեղծելիս առաջնորդվել են նրանց որպես կատարյալ մարդիկ ներկայացնելու և իդեալականացնելու սկզբունքով: Գեղարվեստական արժանիքներով առանձնանում են Մեսրոպ Մաշտոցին, Շուշանիկ Վարդենուն, Վահան Գողթնեցուն, Ներսես Շնորհալուն ու Գևորգ Սկևռացուն նվիրված վարքերը:

Ինչպես ասացինք, Ք. Տեր-Դավթյանի գիտական հետաքրքրությունների երկրորդ ուղղությունը հայ միջնադարյան կրոնաբարոյախրատական բնույթի գործերն են: Նման մի շարք մեծ և փոքր բնագրեր է հրատարակել: Դրանց թվում առանձնանում է 1995 թ. լույս տեսած «Հայելի վարուց»-ը: Գրքի առաջաբանում աշխատասիրողը անդրադառնում է հիշյալ գործի գեղարվեստական առանձնահատկություններին, թարգմանության հանգամանքներին և ձեռագրագիտական խնդիրներին: XV դարի սկզբին լատիներենով ստեղծված այս ժողովածուն ամփոփում է մոտ 60 հեղինակների կրոնաբարոյախրատական գործերը: Նպատակն էր քրիստոնեական բարոյակալությունը ժողովրդին ներկայացնել պարզ և մատչելի ձևերով: Ամբողջական թարգմանությունը կատարվել է XVII դարում Ստեփաննոս Լեհացու կողմից: Բնագիրը կազմելիս Ք. Տեր-Դավթյանը նախապատվությունը տվել է այն ձեռագրերին, որոնք ենթադրվում է, որ Լեհացու կենդանության օրոք և նրա հսկողությամբ են կազմվել:

Առաջաբանում ապացուցվում է, որ հայերեն թարգմանությունը լեհերենից է կատարվել, հոգուտ որի բերվում են լեզվաոճական փաստարկներ և ձեռագրերի հիշատակարանային վկայություններ: Ժողովածուն ունի 246 միավոր պատմություն պարունակող 70 գլուխ: Գրքի ծանոթագրությունների բաժնում ցույց է տրվում, թե յուրաքանչյուր միավոր պատմությունը ինչպես է մուտք գործել հայ մատենագրություն, ինչ ձեռագրերով է վկայված և ինչ ժողովածուներում է հանդիպում:

Անդրադառնալով «Հայելի վարուց»-ի ստեղծման գրական-պատմական հանգամանքներին՝ Ք. Տեր-Դավթյանն այն պայմանավորում է Մովսես Գ Տաթևացիով (կթղ. 1629–1631 թթ.) սկսված հոգևոր վերելքով: Այն միտքն է ընդգծվում, որ ուշ միջնադար-

րի և նոր շրջանի սահմանգծին ստեղծված այս ժողովածուն նաև արդիական ու կիրառական նշանակություն ունի, քանի որ այսօրվա հոգևորականների համար ևս - կարող է քարոզներում բերվող բարոյալից օրինակների շտեմարան ծառայել:

Մտավորականի իրեն բնորոշ քաղաքացիական բարձր նկարագրով Ք. Տեր-Դավթյանը գիտական երկու արժեքավոր աշխատանքներով իր մասնակցությունը բերեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչմանը՝ ռուսալեզու ընթերցողին ներկայացնելով Մեքսստիայի նահանգի հայության ֆիզիկական բնաջնջումը, ունեզրկումը և մշակութային կորուստները: Դժվարին և տոկուն աշխատանքով նա ռուսերեն թարգմանեց ու հանգամանալից ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով ներկայացրեց ժամանակի արևմտահայ նշանավոր մտավորական ու հասարակական գործիչ Կարապետ Գաբրիկյանի «Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին Մեծի մայրաքաղաքին Մեքսստիոյ» («История уничтожения Малой Армении и ее великий столицы Себастии», Երևան, 2015 թ., 560 էջ) մեծարժեք գործը:

Գաբրիկյանը փաստարկված ցույց է տալիս, որ Մեքսստիայում ևս հայերի ֆիզիկական ոչնչացումը վաղօրոք ծրագրված էր: Ինչպես ժամանակի արևմտահայ նահատակ և տարագիր մյուս մտավորականների գործերում, այստեղ ևս նկարագրված են գաղթի սահմուկեցուցիչ ճամփաները և այնտեղ իրականացված կոտորածները: Գաբրիկյանը հիշատակում է նաև Մեքսստիայի ու Փոքր Հայքի տեղագրական ավանդությունները և ժողովրդական բանահյուսության նյութերը: Հետևաբար, հիշյալ գործը ծանոթագրելու, առավել ևս ռուս ընթերցողին ներկայացնելու համար հարկավոր էին պատմաբանասիրական և XX դարասկզբի հայ իրականությանն ու ազգային կուսակցություններին և դրանց Մեքսստիայի գործիչներին վերաբերող հանգամանալից ծանոթագրություններ, որոնք մանրամասնաբար կատարել է Ք. Տեր-Դավթյանը:

100-ամյա տարելիցի շրջանակում հետազոտողի հրատարակած երկրորդ գործը, որը սերտորեն կապված է առաջինի հետ, Մեքսստիայի Ս. Նշան եկեղեցու 1809-1829 թթ. ավագերեց Հովհաննես Մեքսստացու «Պատմութիւն Մեքսստիոյ» գործի ռուսերեն թարգմանությունն է: Այն ընդգրկում է Մենեքերիմ Արծրունու Վասպուրականից տեղի հայության հետ Մեքսստիա գաղթելուց և Ս. Նշան եկեղեցու հիմնումից մինչև Մեքսստիայի 1820-ական թվականների պատմությունը: Հովհաննես Մեքսստացին վախճանվել է 1830 թ.: Մեքսստացին օգտագործել է տեղային բնույթի այնպիսի ավանդություններ և վավերագրեր, որոնք վկայված չեն հայ մատենագրության մեջ:

Ք. Տեր-Դավթյանը ռուսերեն է թարգմանել նաև Թովմա Մեծոփեցու «Հիշատակարանը», որը նվիրված է Հայոց Հայրապետական աթոռի 1441 թ. Ս. Էջմիածնում վերահաստատմանը՝ դարձյալ կից ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով:

Հմուտ աշխատասիրողի թարգմանությունների շարքում, սակայն, պետք է առանձնացնել Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանությունը (Երևան, 2004 թ.): Պայմանավորված այս գործի և հատկապես «Վարդապետության» լեզվի ծանր գրաբարով, հիշյալ թարգմանությունը դարձել է բնագրի մեկնությունը ռուսերենով: Անկեղծորեն պետք է ասեմ, որ գոնե ինձ համար բնագրի մի շարք հատվածներ հասկանալի են դառնում շնորհիվ ռուսերեն թարգմանության:

Այսպիսով, Ք. Տեր-Դավթյանին ենք պարտական հայ մշակույթի գրական մի շարք հուշարձանների ռուսերեն թարգմանությունների համար: Թարգմանված այս գործերը հետաքրքրություն ներկայացնելով արևելաքրիստոնեական, վրացական, սլավոնական, հունական և այլ ժողովուրդների համարնույթ ստեղծագործությունների ուսումնասիրման համար, դրանք նաև ռուսերենից թարգմանվել են այլ լեզուների:

Հայ մատենագրության հուշարձանները ռուսալեզու ընթերցողներին ծանոթացնելու շնորհակալ ու կարևոր գործը նա կատարել է իր կյանքի ուղեկցի՝ Մատենադարանի բազմամյա տնօրեն, երջանկահիշատակ Սեն Արևշատյանի հետ: Գիտական և մարդկային այս համակեցությունն էր, որ զարմանալի մեծ արդյուքների բերեց:

Այժմ տիկին Քնարիկը զբաղված է մի շատ կարևոր ու նվիրական գործով՝ Սեն Արևշատյանի անտիպ և տպագիր աշխատությունները հրատարակության ու վերահրատարակության պատրաստելով: Արդեն լույս է տեսել «Բարդուղիմեոս Բոլոնիացու հայկական ժառանգությունը» (Երևան, 2014 թ.) գործը: Բարդուղիմեոս Բոլոնիացուն կամ Մարադացուն (վիսճ. 1333 թ.) նվիրված ուսումնասիրության մուտքի խոսքում Ք. Տեր-Դավթյանն ամփոփ ներկայացնում է Ս. Արևշատյանի տեսական դրույթները: Այժմ նա վերահրատարակության է պատրաստում Ս. Արևշատյանի «Փիլիսոփայական մտքի ձևավորումը միջնադարյան Հայաստանում» ռուսերեն աշխատանքը, որը տպագրվել է 1976 թ.:

Ք. Տեր-Դավթյանն այսօր ևս շարունակում է աշխատել ջրուլացող եռանդով՝ հրատարակության պատրաստելով մեր միջնադարյան ձեռագրերից հանված ստեղծագործությունները և դրանց ռուսերեն թարգմանությամբ ընթերցողների մի հսկայական բանակի ներկայացնելով հայ մատենագրության անանց արժեքները:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ